995 Տիրոջը նոր երգ երգեցեք,

1. Տիրոջը նոր երգ երգեցեք,
Որ Նա հրաշքներ արավ,
Աշխարհքն ամբողջ տեսավ Աստծո
Փրկությունը հրաշալի:
Ով Տիրոջը սիրողներ,
Ատեցե՛ք չարությունը,
Նա պահում է սուրբերին,
Լույս է ծագում արդարին:

2. Ցնծացե՛ք Տիրոջ առաջին,
Ով ամեն երկրի մարդիկ,
Եվ երգեցե՛ք, և օրհնեցե՛ք,
Եվ սաղմոսնե՛ր ասացեք:
Ով Տիրոջը սիրողներ,
Ատեցե՛ք չարությունը,
Նա պահում է սուրբերին,
Լույս է ծագում արդարին:

3. Սաղմոս ասացեք Տիրոջը
Ե՛վ քնարով, և՛ փողով,
Թմբուկ զարկեք և շեփորներ
Թագավորի առաջին:
Ով Տիրոջը սիրողներ,
Ատեցե՛ք չարությունը,
Նա պահում է սուրբերին,
Լույս է ծագում արդարին: